

Իրական աշխարհ, Իրական Մարդիկ ՄՀԿ-ի մասին

Իրական Աշխարհ, Իրական Մարդիկ սոցիալական հասարակական կազմակերպությունը (այսուհետ՝ Կազմակերպություն) հիմնադրվել է 2003 թվականին մի խումբ բժիշկների և ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կողմից՝ ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց կյանքի որակը բարելավելու նպատակով: Հայաստանում Կազմակերպությունն առաջինն է, որը ստեղծվել և ղեկավարվում է ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ակտիվ մասնակցությամբ:

Կազմակերպության գործունեության ոլորտները ներառում են նաև պալիատիվ խնամքի կարիք ունեցող պացիենտների, թմրամիջոցներ օգտագործողների, բնակչության խոցելի խմբերի իրավունքների պաշտպանությունը՝ ապահովելով առանց խտրականության արժանապատիվ ապրելու եւ սոցիալ-բժշկական ծառայություններից օգտվելու նրանց իրավունքը:

Տեսլական

Կազմակերպության տեսլականն է ունենալ իրավահավասարության եւ ներառականության սկզբունքների վրա հիմնված հասարակություն, որտեղ լիարժեք իրացված է խոցելի խմբերի առողջության իրավունքը:

Առաքելություն

Կազմակերպության առաքելությունն է նպաստել խոցելի խմբերի առողջության իրավունքի լիարժեք իրացմանը, կյանքի որակի բարելավմանը՝ վերջիններիս ներուժի զորեղացման եւ ներառականության ապահովման միջոցով:

Նպատակներ

Կազմակերպության նպատակներն են.

1. Նպաստել խոցելի խմբերին տրամադրվող առողջապահական ծառայությունների հասանելիության և որակի բարելավմանը
2. Նպաստել խոցելի խմբերի՝ մարդու իրավունքների պաշտպանության ապահովմանը և սոցիալական միջավայրի բարելավմանը
3. Նպաստել խոցելի խմբերի անձանց ներուժի զորեղացմանն ու որոշումների կայացման գործընթացում ազդեցության բարձրացմանը

2012-2019թ. ԲՀՀ-ի աջակցությամբ կազմակերպությունն իրականացրել է «Իրավունքների պաշտպանություն և իրավական աջակցություն խոցելի խմբերին» ծրագիրը, որի շրջանակներում ուղիղ իրավական աջակցություն է տրամադրվել ՄԻԱՎ-ով ապրող անձանց և նրանց ընտանիքի անդամներին, ՄԻԱՎ-ի նկատմամբ առավել խոցելի խմբերին:

Ներկայումս Կազմակերպությունն իրականացնում է հետևյալ հիմնական երեք ծրագրերը.

- «ՄԻԱՎ-ով ապրող անձանց խնամք եւ աջակցություն»
- «ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելում»
- «Արդյունավետ ցավագրկման հասանելիության ջատագովություն»
- Այլ ծրագրեր:

«ՄԻԱՎ-ով ապրող անձանց խնամք եւ աջակցություն» ծրագրի շրջանակներում ծառայությունները տրամադրվում են բազմամասնագիտական թիմի կողմից, որում ներառված են սոցիալական աշխատող, հոգեբան, խորհրդատու, իրավաբան:

Ծրագրի շրջանակներում շահառուներին տրամադրվում են.

- Հավասարը հավասարին խորհրդատվություն
- Սոցիալական աջակցություն և խորհրդատվություն
- Իրավաբանական խորհրդատվություն և աջակցություն
- Հոգեբանական աջակցություն
- Ինքնօգնության և փոխօգնության խմբեր
- ՀՌՎ դեղերի փոխանցում ՀՀ-ում և ՀՀ-ից դուրս
- Շարժական թիմի այցեր
- Նյութական աջակցության տրամադրում
- Այլ ծառայություններ

2020 թվականին Կազմակերպությունը ծառայություն է տրամադրել 1816 շահառուի, 2021 թվականին՝ 1835:

«ԹՆՕ-ների շրջանում ՄԻԱՎ-ի կանխարգելում» ծրագրի շրջանակներում կազմակերպությունը տրամադրում է վնասի նվազեցման ծառայություններ: Ծառայությունները տրամադրվում են աուրիչ աշխատանքի միջոցով:

Ծրագրի շրջանակներում տրամադրվում են հետևյալ ծառայությունները.

- Հավասարը՝ հավասարին խորհրդատվություն ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի և առկա ծառայությունների վերաբերյալ
- Պահպանակների, ներարկիչների, ասեղների, սպիրտային խծուծների տրամադրում
- ՄԻԱՎ վարակի վերաբերյալ նախաթեստային և հետթեստային խորհրդատվություն
- ՄԻԱՎ վարակի նկատմամբ հետազոտություն շահառուի ինքնաթեստավորման միջոցով
- Խորհրդատվություն և ուղեգրում Հեպատիտ B, C հետազոտության
- Խորհրդատվություն և ուղեգրում տուբերկուլոզի հետազոտության

- Մեթադոնային փոխարինող բուժման վերաբերյալ տեղեկատվության տրամադրում և ուղեգրում ԿԲԱԿ
- Իրավաբանական անհատական խորհրդատվություն
- Այլ ծառայություններ:

2020 թվականին կազմակերպությունը ծառայություն է տրամադրել 5200 շահառուի, 2021 թվականին՝ 5957:

«Արդյունավետ ցավազրկման հասանելիության ջատագովություն» ծրագրի շրջանակներում իրականացնում է հետևյալ գործողությունները՝

- Ցավային համախտանիշի կառավարման և ցավազրկողների հասանելիության մշտադիտարկում

- Պալիատիվ բժշկական օգնություն տրամադրող ծառայությունների մշտադիտարկում
- Ցավային համախտանիշի կառավարման վերաբերյալ բժշկական խորհրդատվություն
- Պալիատիվ բժշկական օգնության վերաբերյալ բժշկական խորհրդատվություն
- Իրավական խորհրդատվություն ոլորտը կարգավորող օրենքների, ենթաօրենսդրական ակտերի, ուղեցույցների և այլ փաստաթղթերի վերաբերյալ

- Իրավական խորհրդատվություն և աջակցություն ծրագրի շահառուներին /բուժառու, բժիշկ/

- Վերապատրաստման դասընթացներ բժիշկների, բուժաշխատողների համար
- Ջատագովություն
- Եվ այլն:

Համագործակցություն

Կազմակերպությունը համագործակցում է այն կառույցների հետ, որոնք ընդունում եւ կիսում են իր արժեքներն ու նպատակները, ինչպես նաեւ պարբերաբար դիտարկում է համակիր կազմակերպությունների եւ անձանց հետ համագործակցության ընդլայնման հարցը: Ձեւավորման օրվանից ի վեր Կազմակերպությունն ընդլայնել է իր կազմն ու համագործակցության շրջանակը: Ներկայումս Կազմակերպությունն անդամակցում է հետևյալ կազմակերպություններին.

- ✓ «Ընդդեմ կանանց նկատմամբ բռնության կռաւիցիա» ՀԿ
- ✓ «Խտրականության դեմ պայքարի եւ հանուն հավասարության կռաւիցիա» ՀԿ
- ✓ «Մարդու իրավունքների տուն Երեւան» ՀԿ
- ✓ «Արեւելյան երոպայի եւ Կենտրոնական Ասիայի ՄԻԱՎ-ով ապրող մարդկանց ցանց»
- ✓ «Վնասի նվազեցման երասիական ցանց»:

Բացի վերը նշված ծրագրից ԻԱԻՄ ՀԿ-ն իր առջև դրված նպատակները կյանքի կոչելու համար բազմաթիվ դոնորների աջակցությամբ հաջողությամբ իրականացրել է ծրագրեր: Այդ դոնորներից են՝ Վորլդ Վիժն Հայաստանը, ԵՄ, UNAIDS, UNDP, UNICEF, ԵՀԽ հայաստանյան

Կլոր սեղան հիմնադրամ, ԲՀՀ, AFEW, ECUO: Որոշ ծրագրեր «ԻԱԻՄ» ՀԿ-ն իրականացրել է կոնսորցիումների կազմում, որտեղ հանդես է եկել որպես առաջատար կազմակերպություն՝ տրամադրելով ենթադրամաշնորհներ, իրականացրել է վերահսկողություն և գնահատում, ընդունել է հաշվետվություններ և ձեռք է բերել համապատասխան փորձ: